ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Էդուարդ Մկրտչյան, «Գրաբարի դասընթաց», Երևան, 2008 թ., 300 էջ:

Վերջերս լույս է տեսել է. Ս. Մկրտչյանի «Գրաբարի դասընթաց» ուսումնաօժանդակ ձեռնարկը, որի պատասխանատու խմբագիրն է դոցենտ Հ. Մ. Ավետիսյանը, երաշխավորել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը, ինչպես նաև պրոֆեսոր Ռ. Ս. Ղազարյանը:

Այս բնագավառում հայտնի են Մ. Աբեղյանի, Ստ. Մալխասյանցի, Հր. Աճառյանի, Ս. Ղազարյանի, Վ. Առաքելյանի, Ա. Աբրահամյանի, Պ. Շարաբխանյանի, Հ. Ավետիսյանի և Ռ. Ղազարյանի հեղինակած աշխատությունները: Վերջերս լույս տեսան Վ. Համբարձումյանի, նաև Լ. Խաչատրյանի և Գ. Թոսունյանի ձեռնարկները:

է. Ս. Մկրտչյանի դասընթացի հենքն է կազմում երեսունչորս դասերից բաղկացած նյութն իր գործնական մասով առաջադրանքներով ու վարժություններով, բնագրային թարգմանական հադվածներն ու գրաբարյան հայերեն – աշխարհաբար համառոտ բառարանը: Դասերը ներկայացված են երեք մասով: Առաջին դասը նվիրված է գրաբարի հնչյունաբանությանը:

Երկրորդ մասում մինչև քսաներկուերորդ դասը քննարկվում են հին հայերենի ձևաբանական երևույթները:

Ձեռնարկի քսաներեքից երեսունչորսերորդ դասերը նվիրված են գրաբարի շարահյուսական հիմնահարցերի պարզաբանմանը և ուսուցմանը: Քննության են առնվում հին հայերենի ինչպես պարզ նախադասության կազմության ու գործառության, այնպես էլ բարդ նախադասության էության ու տարատեսակների տեսական բնորոշման հիմնահարցերը: Ինչպես արդեն նշեցինք, այս դասընթացը տեսական կտրվածքով մյուսներից շահեկանորեն առանձնանում է հենց շարահյուսական հարցերի համակարգված ու քիչ թե շատ ամբողջական քննարկման իրողությամբ: է. Մկրտչյանը առանձին դասեր է հատկացրել գրաբարի շարահյուսական այնպիսի երևույթների հանգամանալից պարզաբանմանը, ինչպիսիք են նախադասության ենթակայի ու ստորոգյալի արտահայտությունը, նրանց համաձայնությունն ու խնդրառությունը, որոշիչ–որոշյալ, հատկացուցիչ–հատկացյալ, բացահայտիչ–բացահայտյալ կապակցությունները, խնդիրներն ու պարագաները, համադասական ու ստորադասական և բազմաբարդ նախադասությունները և այլն: Տեսական նյութն ամրապնդվում է վարպետորեն կազմված առաջադրանքներով ու վարժություններով, որոնց օգնությամբ ուսանողը ոչ միայն ավելի լավ է ընկալում ներկայացվող տեսական նյութը, այլև ամրապնդում է ձեռք բերված լեզվաբանական գիտելիքները ինքնուրույն աշխատանքի օգնությամբ: Պետք է հատուկ ընդգծել նաև այն հանգամանքը, որ «***ի տարբերություն գրաբարի հայտնի դասագրքերի ու***

ծեռնարկների՝ այստեղ տրված վարժություններում բնագրային նյութերը, նախադասությունները թարգմանված–վերածված են արևելահայերենի՝ նպատակ ունենալով բնագիրը՝ գրաբարյան խոսքը, հասկանալի և մատչելի եղանակով ուսուցանել» (էջ 3–4):

Դասընթացի վերջում տեղ են գտել հիմնականում հինգերորդ դարի հայ մատենագիրների երկերից խնամքով քաղված բնագրային թարգմանական նմուշները, որոնք նույնպես ուղեկցվում են մանրամասն ծանոթագրություններով ու բոլոր դժվարըմբռնելի կառույցների պարտադիր աշխարհաբար թարգ–մանությամբ: Այս ամենի արդյունքում թվում է, որ սույն դասընթացը կարող է օգնել ուսանողին, ընթերցողին՝ հաղթահարելու մեսրոպյան հայերենի լեզվական գանձերին ամենիջականորեն հաղորդակցվելու գործընթացում առաջ եկող դժվարությունները:

Ուսումնական ծեռնարկում, ցավոք, կան տպագրական վրիպումներ (էջ 3, 4, 41, 50, 86, 92, 245) ու խմբագրական բնույթի սայթաքումներ, որոնք որակ չեն կազմում և հեշտությամբ կվերացվեն գրքի հետագա հրատարակություններում: Կարծում ենք, հեղինակն ի զորու է ավելի հարստացնելու գրաբարի լեզվական կառուցվածքի ուսումնական շարադրանքը տեսական նոր պարզաբանումներով ու գործնական ավելի հղկված առաջադրանքներով, որոնց մենք անտարակույս դեռ ականատես կլինենք:

Ընդհանուր առմամբ գրախոսվող «Գրաբարի դասընթացը» գրված է գիտական պատշաճ մակարդակով, գրաբարի բուհական դասավանդման համար կրթա–մանկավարժական զգալի ներուժ է պարունակում և, անշուշտ, կարող է օգտակար լինել հին հայերենով հետաքրքրվող ինչպես մասնագետների ու ուսանողների, այնպես էլ ընթերցող ամենալայն շրջանակների համար:

Թ. Ս. Շահվերդյան
բանասիրական գիտությունների դոկտոր